ՀԻՄԱՎՈՐՈՒՄ
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 259-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հոդվածների համաձայն: Նախագիծը մշակելիս հաշվի է առնվել բյուջեի մնացորդների մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրված տեղեկանքը:
Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 131680.2441 հազար դրամ, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 3932.760 հազար դրամ:
Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից 60000.0 հազար դրամը կուղղվի ֆոնդային բյուջե, իսկ 71680.2441 հազար դրամից 41750.0 հազար դրամն կուղղվի ՀՈԱԿ-ների պահպանման ծախսերի և 29930.2441 հազար դրամը պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը : Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կկազմի 63932.760 հազար դրամ, որը կուղղվի ֆոնդային բյուջեի պարտքերի մարմանը:
Անհրաժեշտություն է առաջացել փոփոխելու նաև ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝ այն ավելացվել է 323925.0 հազար դրամով և կազմել է 264450.0 հազար դրամ:

Փոփոխվել է նաև պետության կողմից հատկացված սուբվենցիայի 1443475,0 հազ. դրամը, ավելանալով 416075.0 հազար դրամով այն կազմում է 1859550.0 հազար դրամ:

Քանի որ բյուջեն կրում է նորմատիվ բնույթ, ուստի նրա մեջ կատարվող փոփոխության նախագիծը ևս կրում է նորմատիվ բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ